



Ներդրեք՝ ձեր տանն Էներգիայի օգտագործումը կրճատելու նպատակով

Էներգաարդյունավետությունը գերակա ուղղություն է ԵՄ-ի համար, որը ֆինանսավորում է մի շարք նախաձեռնություններ՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում Էներգիայի օգտագործման ծավալների կրճատման ուղղությամբ:

Ձեր շենքի Էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումները կապահովեն ամենամեծ երկարաժամկետ եկամուտները՝ ավելի փոքր հաշիվների, հարմարավետության և անշարժ գույքի արժեքի ավելացման տեսանկյունից: Նշանակալի ներդրումները պահանջում են մասնագիտական փորձաքննություն, հետևաբար նման պարագայում փորձագետին խնդրեք ձեր տանն իրականացնել **Էներգետիկ աուդիտ**^{*} շենքի թույլ կողմերը բացահայտելու և առավել ծախսաարդյունավետ կերպով **բարելավումներ նախագծելու** նպատակով:



Մի քանի միջոց՝ նշանակալի տարբերությունն ապահովելու նպատակով



Ամբողջովին մեկուսացրեք շենքը՝ Էներգաարդյունավետության բարձր չափանիշներին համապատասխան, և կրճատեք ջերմության կորուստը **20-30%-ով**:



Տեղադրեք **եղանակը կարգավորող ավտոմատացված ջեռուցման համակարգ**, որը հաշվի է առնում դրսի եղանակը՝ նվազեցնելով Էներգիայի սպառումը **15-40%-ի չափով**:



Մեկուսացրեք և **անջրանցիկ դարձրեք նկուղը**՝ նվազեցնելով Էներգիայի սպառումը **10-12%-ի չափով**:



Մեկուսացրեք արտաքին պատերն ու տանիքները և կրճատեք Էներգիայի օգտագործումը մինչև **20-30%-ի չափով**:



Տեղադրեք **արևային ջրատաքացուցիչներ** տանիքում՝ տաք ջրի կարիքները հոգալու համար:



Տեղադրեք **ջերմային պոմպեր**՝ Էներգաարդյունավետությունը **մոտ 50%-ի չափով** բարձրացնելու համար:

* Ներկայացված ցուցանիշները միջինացված են և, հետևաբար, նշված Էներգետիկ խնայողության ծավալները կարող են տատանվել:

